

ԿԱՄՈՎԻՆ ԱԶԱԿԻՑ

Աշոտ Միրզոյանը ղեկավարում է Գյումրիի քաղաքային ուսումնասիրությունների կենտրոնը: Աշոտն ինձ համար իսկական հայրնություն էր. նրա նմանների հետ ծանոթության առիթով է, երևի, հաճախ ասվում այն խոսքը, թե՛ ո՛ր էինք մենք, որ մինչև հիմա իրար չգիտեինք:



Աշոտը՝ կիսաժպիտ, կարեկցողի հայացքով նայեց շոգից փանջված ու քրքնած մեր դեմքերին, սառը ջուր ու սուրճ փվեց և, վերցնելով իմ լուսանկարչական սարքը, նստեց համակարգչի առաջ: Նա փեղյակ էր, որ ես ու Արտաշեսը ժամերով քաղաքի փողոցներն ենք չափչփել՝ հին փներ լուսանկարելու և հիմա, մեր բերած լուսանկարները համակարգչի վրա մեկ-մեկ դիտելով, իր կիսաժպիտը գուսպ ծիծաղի է վերածել ու պարտասպ է մեր դիլեմանության մասին դասախոսություն կարդալ: Նա չօգտագործեց ոչ սիրողական, ոչ էլ դիլեմանոր բառերը. նրա

բարեկրթությունը դա թույլ չէր փա, պարզապես երբեմն-երբեմն ծիծաղի փոխվող նրա ժպիտից մենք հասկացանք, որ մեր արած լուսանկարները, մեղմ ասած, բանի պեպք չեն:

Աշոտը կարող էր մեզանով բուրդովին էլ չզբաղվել՝ դա իր ոչ պարտականությունն էր, ոչ էլ այդ առիթով ինչ-որ մեկից հարուկ խնդրագիր էր սրացել, պարզապես նա իր քաղաքի հարազատ բնակիչն էր, և նրա համար միևնույնը չէր, թե իր քաղաքի մասին ով ինչ կգրի, ինչ կնկարի: Նա ուզում էր, որ իր քաղաք եկող ամեն մեկը, լրագրող է, թե գրող կամ լուսանկարիչ, սպույգ, ճշմարիտ փեղեկություն փանի: Քաղաքը սիրող, քաղաքով հպարտ մարդու արժանի կեցվածք: Կեցվածք, որ պահում է իրեն նեղություն փալով, իր ժամանակն այդ եկողների համար վարնելով: Մեր «գործի» մասին էլ պարտաբար էր իմացել. իր համաքաղաքացի, իր ընկեր Աշոտ Նակոբյանը հենց այնպես, գրույցի պահին ասել էր, թե Երևանից ընկերոջս նոր հանդիպեցի, որ եկել էր իր գրքի համար քաղաքի հին փները լուսանկարելու: «Ինչո՞ւ հարկապես հին փները»: – Նարցրել էր Աշոտը: «Նամենափում է Կարսի հայկական փների հետ. նրա գրքի մի գլուխն այդ մասին է»: «Վար չի լինի, որ նա Երևան վերադառնալուց առաջ հանդիպի ինձ»: – Կամովին ինքն իրեն նեղ էր գցել Աշոտը և նստել ու սպասել էր մեր գալուն:

Եվ ահա, Նակոբյան Աշոտի զանգից հետո մենք մտել ենք նրա գրասենյակ, ու իմ արած լուսանկարները նայող Աշոտի ոչ քննադատող, ոչ էլ չասվող, բայց նկարվող հանդիմանանքն ինձ չի նեղացնում. կարծես մենք հարյուր փարվա ընկերներ ենք:

Ահա այսպես մենք ծանոթացանք: Արտաշեսը, որ գյումրեցի է և մի փեսակ իմ էքսկուրսավարն է Գյումրիում, փորձում է ինձ միսիթարել, թե՛ մի նեղվիր: Բայց ես նեղվելու խնդիր, անշուշտ չունեմ և անգամ ուրախ եմ, որ այս համակրելի մարդը ժամերով ինձ է սպասել, որ օգտակար լինի, որ իմ գրքում, ինչի մասին շատ թռուցիկ փեղեկություն ունի, ճշմարիտ բան գրվի, «կարգը կարգին» նկարներ դրվեն:

Աշոտը, որ ցուցադրական որևէ բան երբևէ չի արել ու չի էլ սիրում, երբ ուրիշներն են աշխարհով մեկ ներկայացնում, թե՛ փեսեք-փեսեք, սրան-նրան ինչ օգնություն ցույց փվի, լուսանկարչական սարքի ֆլեշը վերադարձրեց ինձ և հրավիրեց համակարգչին մտրիկ նստել:

– Այս մի լուսանկարը, – նա արդեն ցույց էր փալիս իր արխիվի նյութերը, – շատ ճիշտ համադրություն կլինի Կարսի այս մի շենքին. նա բացեց մեկ այլ էջ և ցուցադրեց Կարսի հայկական փունը:

– Նայե՛ք՝ համարյա նույն որմնաքանդակներն են,- շարունակեց նա՝ մեկ այս, մեկ այն շենքի նկարը բացելով,- այնքան նույնանման են, կարծես միևնույն վարպետն է շարել: Ու այսպես՝ հիսունից ավել լուսանկար Կարսից ու Գյումրիից:

Զարմանք բան է այսչափ ուշադրությունը: Մարդու այս փեսակն, ավաղ ամենուր և ամեն ժամանակ չի հանդիպում, և նման մարդուն քաշվում ես անգամ շնորհակալություն բառն ասել՝ նուրբ են իրենց կամովին նեղություն փոփոխների հոգիները. «Այդ մենք պիտի շնորհակալ լինենք, -կասեն նրանք,- որ դուք եկել ու մեր քաղաքի մասին եք գրում»:

Ես մինչև հիմա էլ, անգամ ինքս ինձ համար, չեմ գրել այն հարցի պատասխանը, թե ինչի՞ց է, որ ես այդպես կապված եմ այս քաղաքի ու նրա բնակիչների հետ. նախ ռադիոյում, ապա և հեռուստատեսությունում փաստամյակների իմ աշխատանքի ընթացքում ամեն առիթ օգտագործել եմ՝ հաղորդումներ անելու այս քաղաքի մասին: Ու այս գրքի սփռվածան գաղափարն էլ դարձյալ այդ սիրուց ու վերաբերմունքից ծնվեց: Մա մեկ ուրիշ առիթով գրելիք, անպայման գրելիք թեմա է:

Վերադառնալով Աշոտ Միրզոյանին, պիտի խոստովանեմ, որ նա, իր բնույթին ներհատուկ զարմանալի ցայտուն բարեսիրտ վերաբերմունքով, համեստ ու առաքինի պահվածքով եկավ-փեղավորվեց Գյումրիից ինձ սրտամտ ամրականց շարքում ու այդ քաղաքի հանդեպ իմ սիրուն մի նոր ջերմություն բերեց:



Շարունակելի